

## 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

### 1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

#### 1.1.1. 2001թ. հունվար-մայիսի ՀՆԱ ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի ծավալի աճը 2001թ. հունվար-մայիսին 2000թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 106.7% 2000թ. հունվար-մայիսի 101.3 %-ի դիմաց:

ՀՆԱ-ի աճը հանրապետությունում պայմանավորված է հիմնականում հետևյալ ճյուղերով՝ արդյունաբերության (աճի տեմպը 104.2%), շինարարության (102.6%), առևտրի և հանրային սննդի (113.8.0%):

Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ հանրապետությունում անցած հինգ ամիսներին ՀՆԱ-ի արտադրության կառուցվածքում արձանագրվել են դրական տեղաշարժեր: 2001թ. հունվար-մայիսին տնտեսության բազային ճյուղերում արտադրվել է ավելացված արժեք 2.3 տոկոսային կետով ավել, քան 2000թ. նույն ժամանակաշրջանում: Աճել են նաև հարկային մուտքերը, որոնց աճի հաշվին ապահովվել է ՀՆԱ աճի տեմպի 2.1 տոկոսային կետ: